ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 31» հոկտեմբերի 2018 թ. N 268-Ա

ՀԱՅԿ ՂԱՓԱՆՑՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 161-րդ, 163-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայկ Ղափանցյանի դիմումը՝

Կարգադրում եմ՝

1.«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Ղափանցյանին տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ից նոյեմբերի 29-ը ներառյալ:

2.«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները 2018 թվականի նոյեմբերի 3-ից նոյեմբերի 29-ը ներառյալ, վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության բեմական մասի վարիչ Նինա Չարվադարյանին:

3.Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի նոյեմբերի 30-ին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ